«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2025/134

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2025 թ. N 134

«ԵՐԵՎԱՆԻ ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ **«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ**

Գործունեության հասցեն՝ **ՀՀ, ք. Երևան, Մաշտոց 11**

Նախորդ հավատարմագրման մասին և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով (այսուհետ՝ Հավատարմագրման կարգ), «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2025 թվականի հունիսի 11-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՄՈՒՀ, Քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 01 փետրվարի 2024թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 13 հունիսի 2024թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 28-30-ը հոկտեմբերի 2024թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 21 փետրվարի 2025թ.

թերությունների վերացման նախնական ներկայացում՝ 04 ապրիլի 2025թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

- **Արմեն Հարությունյան՝** Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի զարգացման գծով պրոռեկտոր, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի ղեկավար:
- **Գայանե Ավետիսյան՝** Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Որակի ապահովման բաժնի պետ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի անդամ:
- **Մարիամ Հովհաննիսյան՝** Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի Որակի ապահովման պատասխանատու, դասախոս, փորձագիտական խմբի անդամ:
- **Վովա Արզումանյան** ՝ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող-փորձագետ:

Փորձաքննությունն իրականացվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Գնահատման արդյունքներն են.

Չափանիշ	Եզրակացություն
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3. Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5. Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Բավարարում է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8. Հասարակական պատասխանատվություն	Չի բավարարում
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Քոլեջի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտարկումները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

I. ***Քոլեջն ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում:***

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում իրականացվող միջին մասնագիտական կրթական ծրագրերը հիմնված են պետական կրթական չափորոշիչների վրա: Քոլեջը ձեռնարկել է ուսումնառության արդյունքների քարտեզագրման գործընթաց, որը նպատակահարմար է զարգացնել՝ հստակեցնելով կիրառվող մեթոդաբանությունը և ապահովելով, որ այն դառնա կրթական ծրագրերի բարելավման արդյունավետ գործիք:
Խորհուրդ է տրվում կրթական ծրագրերի համեմատական վերլուծությունն ամրագրել որպես մշտական գործելակարգ: Այն պետք է իրականացվի հստակ ձևակերպված չափանիշների,

փաստաթղթային ձևակերպման, արդյունքների վերլուծության և դրանց հիման վրա իրականացվող բարելավումների կիրառման միջոցով: Երկարաժամկետ բարելավումների համար անհրաժեշտ է ձևավորել կրթական ծրագրերի որակի ապահովման ամբողջական համակարգ, որն ընդգրկում է ուսումնառության արդյունքների և ավարտական քննությունների մշտադիտարկումը, աշխատաշուկայի պահանջների գնահատումը, ինչպես նաև համեմատական վերլուծությունների արդյունքների հիման վրա բարելավումների պլանավորումը: Կրթական ծրագրերի շարունակական բարելավման համար անհրաժեշտ է նաև անդրադառնալ քոլեջի նյութատեխնիկական ռեսուրսներին: Ռեսուրսների վերանայումն ու արդիականացումը պետք է ուղղված լինեն հատկապես գործնական հմտությունների զարգացմանը և համապատասխանեն մասնագիտական ոլորտի տեխնոլոգիական նորություններին:

II. *Ռազմավարական կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, առկա են բարելավման ուղղություններ՝ ապահովելու արդյունահենք կառավարում:*

Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջում առկա են ռազմավարական կառավարման և որակի ապահովման համակարգերի ձևավորման որոշ նախաձեռնություններ, սակայն դրանք դեռևս չունեն ամբողջական, համակարգված և ինստիտուցիոնալ բնույթ:

Քոլեջին խորհուրդ է տրվում վերանայել ռազմավարական պլանավորումը՝ այն կառուցելով հստակ ձևակերպված նպատակների, գործողությունների, չափելի արդյունքների և պատասխանատու ստորաբաժանումների միջև փոխկապակցվածության սկզբունքով: Պետք է ապահովել ռազմավարական ծրագրի, տարեկան գործողությունների պլանների և տնօրենի հաշվետվությունների միջև ուղիղ կապ՝ վերափոխելով հաշվետվությունները վերլուծական գործիքների՝ ներառելով արդյունավետության ցուցանիշներ, չկատարված աշխատանքների պատճառների վերլուծություն և բարելավման առաջարկներ: Ռեսուրսների բաշխման գործընթացում ևս կարևոր է ձևավորել ռազմավարական կողմնորոշում: Ֆինանսական պլանավորումը պետք է կապակցել հաստատության առաջնահերթություններին և նպատակներին՝ ապահովելով ռեսուրսների նպատակային, հաշվետու և արդյունավետ օգտագործումը: Չնայած որ քոլեջն ունի որակի ապահովման պատասխանատու, անհրաժեշտ է ամրապնդել նրա գործառույթների իրական կիրառությունը՝ ներառելով տարեկան պլանավորում, գնահատման պարբերականություն քոլեջի բոլոր ոլորտներում և արդյունքների վրա հիմնված որոշումների կայացում:

III. *Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:*

Քոլեջում հետազոտական աշխատանքը, որպես երաժշտական կրթական գործընթացի բաղկացուցիչ մաս, զարգացած է ստեղծագործական և կատարողական ուղղություններով: Դասախոսներն աջակցում են ուսանողներին՝ ուղղորդելով նրանց անհատական աշխատանքը կատարողական սկզբունքների հիման վրա, ինչն ապահովում է մասնագիտական մտածողության ձևավորում: Հետագա զարգացման համար անհրաժեշտ է ձևավորել հետազոտական գործունեության միասնական ռազմավարություն, որը կընդգրկի հստակ սահմանված նպատակներ, ակնկալվող արդյունքներ և գործընթացների կառավարման սկզբունքներ: Կարևոր է ուսանողական հետազոտական և ստեղծագործական աշխատանքների գնահատման համար սահմանել հստակ չափորոշիչներ և մեթոդական մոտեցումներ՝ ապահովելով գործընթացի համահունչ իրականացումը բոլոր մասնագիտությունների շրջանակում:

Քոլեջում նպատակահարմար է ձևակերպել միջազգայնացման և արտաքին համագործակցության հստակ ռազմավարություն՝ ներառելով կոնկրետ նպատակներ, գործողություններ և չափելի արդյունքներ: Զարգացման առաջնահերթ ուղղությունները պետք է ընդգրկեն օտար լեզվի իմացության խթանում, միջազգային կրթամշակութային հաստատությունների հետ գործընկերային կապերի ընդլայնում, ինչպես նաև ուսանողների և դասախոսների մասնագիտական ներգրավվածության հնարավորությունների ստեղծում միջազգային ծրագրերում, համատեղ նախագծերում և կրթական նախաձեռնություններում: Միջազգային մրցույթներին և փառատոներին մասնակցության առկա փորձը հնարավոր է ամրապնդել որպես երկարաժամկետ համագործակցության հարթակ:

4. Թերությունների վերացման ծրագրում անհրաժեշտ է նախատեսել վերը նշված բացերի լուծմանն ուղղված առաջնահերթ գործողություններ՝ ապահովելով նաև հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան միջոցառումներ:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել Քոլեջի Կառավարման խորհրդի կողմից հաստատված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով I, II և III կետերում նշված խնդիրների առաջնահերթ լուծմանն ուղղված գործողությունները՝ ապահովելով հնարավոր ռիսկերի կանխարգելման և կառավարման համապատասխան մեխանիզմներ:
3. Կազմակերպել բոլոր կրթական ծրագրերի ներքին աուդիտ մինչև հաջորդ հավատարմագրման ժամկետը:
4. Հավատարմագրման կարգի 12.1 կետի պահանջներին համապատասխան 2 տարին մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով հաստատության գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները: Գնահատման արդյունքները քննարկել քոլեջի կառավարման խորհրդում:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Քոլեջի գործունեության արդյունավետություն:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Վ. Գաբրիելյան**

2025 թ., հունիսի 11